ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Բուժքույրերի միջազգային օրվա առթիվ

12.05.2022

Սիրելի բուժքույրեր,
Ի սրտե և լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի առթիվ:

Ձեր մասնագիտությունն իսկապես եղել է և շարունակվում է որակվել որպես մեծագույն նվիրում պահանջող և մարդակենտրոն մասնագիտություն՝ հանուն կյանքի ու փրկության:

Հավատացած եղեք, որ այն հոգատարությունն ու սերը, որը դրսևորվում է բուժհաստատությունում սպիտակ խալաթ կրող յուրաքանչյուր անձի կողմից, միշտ փոխադարձվում է ամենաանկեղծ ու մարդկային վերաբերմունքով: Եվ ավելի մեծ ու իրական գնահատանք բժշկի համար երևի թե չկա:

Հարգարժան բուժքույրեր, ևս մեկ անգամ շնորհավորելով ձեզ մասնագիտական օրվա առթիվ՝ ցանկանում եմ ամուր կամք և անձնական երջանկություն:

Եվ թող ձեր նվիրական աշխատանքը միշտ հաջողությամբ պսակվի: Ամենայն բարիք ձեզ և ձեր ընտանիքներին: